**Արձանագրություն N 3**
**Շինարարական նյութերի ձեռքբերման « ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/144» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի**

ք. Երևան

08.07.2019թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Խաչատրյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Գասպարյան /գնահատող/, Հ. Մարտիրոսյան /գնահատող/
Հ. Թորոսյան /բացող/, Ա. Կարապետյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

## 1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/144» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անցկացվող բանակցությունների մասին

(Ա. Խաչատրյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ «**ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/144**» ծածկագրով գնման ընթացակարգի 10-րդ և 12-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից որոշելու նպատակով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետ համաձայն անցկացվող գների նվազեցման բանակցություններին ծանուցված մասնակիցներից ոչ մեկ չի ներկայացել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0*

## 2. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցների մասին

(Ա. Խաչատրյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/144» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներ են ճանաչվել.

-1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ և 17-րդ չափաբաժնների մասով «Մարմիկ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ

-7-րդ չափաբաժնի մասով «Արմեն Զաքարյան Գագիկի» Ա/Ձ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ

-9-րդ և 16-րդ, չափաբաժինների մասով «Էկոֆորմ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ

-11-րդ չափաբաժնի մասով «Մովսեսյան» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ

-15-րդ չափաբաժնի մասով «ԲԱՐՍԻՍ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

## 3. Ընթացակրգը որոշ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին

(Ա. Խաչատրյան)

3.1 Գնման ընթացակարգի 10-րդ և 12-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին:

3.2 Հաստատել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

## 4. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Ա. Խաչատրյան)

4.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

5.2 Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցներին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել իրենց կողմից առաջարկվող ապրանքների՝ անվանումը,

ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը՝ համաձայն հրավերի 3.1 հավելվածի: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0*

**6. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

---

(Ա. Խաչատրյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 5-րդ կետում նշված փաստաթղթերի գնահատման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 15:00-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Խաչատրյան

Անդամներ՝ ---------- Ա. Գասպարյան

---------- Հ. Մարտիրոսյան

---------- Հ. Թորոսյան

---------- Ա. Կարապետյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան